



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ի Ն Գ Ի Ռ Շ Ն Ե Բ Ը

(Հայաստանի ու Կիլիկիո մեջ)

Ներհուն քանասեր ու պատմապետ հայր Վարդան Հացունին կխորհի, որ հին ժամանակներուն մեջ գրողակներու պատասաւը կամ կտավը միագոյն էր՝ կարմիր, սպիտակ և այլն ու թե արդի քանի մը աղակերուն դանադան գույներով պարզած գրողակները նորութուն մըն է (տես «Հայ գրողները» էջ 9—10) :

Հայ մատենագիրներու մոտ գրողները կը շիջին իր «գրաւ», «գրօ», «վառ», «նշան» : Արաբական ազդեցութեան ներքո հալերը գործածած են նաև «Ալամ» բառը, որ կնշանակեր գրող :

Հին Հայաստանը երկու կարգի գրողակներ ուներ. առաջին՝ տահմային դրոշը, երկրորդ՝ աղագին գրողը :

Տոհմային գրողներու կարգին առաջին տեղը բռնած էր արքայական դրոշը :

Հին հայոց բոլոր կարևոր հարստութեաններուն՝ Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց ու Ռուբինյանց թագավորութեաններուն բոլոր գրողներուն գույնը ծիրանի էր :

Հայ նախարարները ու քանի մը ուրիշ պետապետ իշխանները ունեին իրենց սեփական տոհմային գրողները, որոնք, սակայն, արքայական գրողին նման ծիրանագույն չեին, այլ սպիտակ էին : Անոնք կրկնազանգեին իրենց սեփական ձեռքով ու նշաններով :

Պետք է շեշտել, որ քաղաք նախարարները չունեին իրենց սեփական գրողակները, այլ գրող ունեին միայն այն նախարարները, որոնք կարող էին հայոց քաղաքներին հատուկ զորագուևդներ հայթայթել :

Հին Հայաստանի նախարարութեանները բարձրագոյն էին : Փալատոս անոնց թիւը կրարձրացնէ 900-ի, ուրիշ պատմիչներ այս թիւը կասմանաւորակեն 400 թիւին մեջ : Որոշապես կհասկացվի միայն, թե Հայաստան շատ նախարարներ ու իշխաններ ուներ, արանց մեծագույն մասը ունեին իրենց մասնահատուկ գրողը ու նշանները :

Իշխանական գրողները կրնային մետաքսեւ ըլլալ, բայց չունեին ոսկեհոտ զարդարանքներ, որոնք միայն հատուկ էին հայ թագավորներուն : Սպիտակ գույնն ալ հին հայոց մոտ կարմիրին չափ սիրված էր : Կրօթիւնակ՝ թագավորներ ու կաթողիկոսներ շատ մը տոներու առիթով իրենց կառքերուն կըծեին սպիտակ ձիեր կամ ջորիներ : Կհագնեին նաև սպիտակ զգեստներ : Հայաստանի հեթանոսական շրջանին Անահիտ դիցունհին կնվիրեին սպիտակ գոհեր, բայց ծիրանին միշտ Ըալսրէսրեյագույնն էր :

Միջին դարու հայ իշխաններն ալ սկսան տակալ առ տակալ գործածել ծիրանագույն գրողներ, որոնց միայն նշանները սպիտակ էին ընդհանրապես :

Ազաթանգեղոս կաթանդե, թե երբ Գրեկոս Լուսավորիչ Կեսարիա կերթար ձեռնագրութեան համար իրեն ընկերացող իշխանները ունեին իրենց մասնավոր «նշանները» (այսինքն գրողները — տես 602) :

Նույնպես Եղիշեն, Ալարայքի հայ բանակին նախարարները կամ վնդապետները կներկայացնէ իրենց առանձին-առանձին գրողներով (տես 180) :

Փալատոս կհիշատակէ, որ Վասակ Մամիկոնյանին հեծելազոր քանակը ուներ իր տոհմային գրողները (տես Դ.-ի) : Փալատոս նույնպես կհիշատակէ Մուշեղ Մամիկոնյանին գրողը ու սեփական նշանները, որոնք Բագրատունի ճակատամարտի նախօրյակին ղենքերու հետ միասին օրհնել տված էր Մեծն Ներսես Պարթև կաթողիկոսին : Ըստ Փալատոսի Մանգեղ ևս ուներ իր սեփական գրողն ու նշանները :

Արքայական ու իշխանական մասնավոր գրողներեն դատ Հայաստանն ուներ նաև իր համազգային մեծ դրոշը : Այսպիսի առանձին գրողը գործածութեան տրվեցալ ջրխտոնեութենեն վերջ :

Նման Բյուզանդական կայսրութեան աղային մասնավոր գրողին հայ աղագին

դրուցը ևս կկրեր յաշը իրը խորհրդանշան: Այս մասին Եղիշէ կհիշատակէ որոշ բացաւորութեամբ, երբ կըրթածն «խաչանշան արարեալ ի վերայ գորուն» բառերը (տես 127):

Ազգային խաչանշան դրուցը կպարզեր, երբ հայ բանակը կկռւեր անհալատներուն դէմ: Դասիթ Անհաղթ իկիլիտիան ալ կհոսի Հայաստանի համազգային խաչադրուցին մասին ու կախանդէ, որ առաջինի դրուց մը կարգիւր հայկական բանակին առջեւն (տես իր էջ 117):

Հովհաննես Մամիկոնյան կախանդէ, որ հայ կղերականներն ևս պատերազմի պահուն ունեին խաչադրուցներ (տես իր պատմութեան էջ 50-ը):

Թովմա Արծրունին, Հովհաննես պատմիչը ու Մմբատ պատմիչը կրնդունին հայ բանակներու առջեւն տարված խաչադրուցներու գործածութեամբ:

Կիլիկիոյ հայ թագաւորներն Լեոն Դ., երբ 1302-ին Արագացոց դեմ կկռուէր «գնդան Սրբոյ խաչին առաջի ասնելով» կկրուէր, կրսէ Մմբատ պատմիչը: Ազգային այս խաչադրուցն ալ ծիրանապուշն էր ու սակիով քանդակված էր և սակի ծոպերով միասին: Միջին դարուն խաչադրուցին անկաններուն վրայ քանդակվեցան նախ հետեւյալ տերունական բառերը.

«Տէր Աստուած Յրոուս Քրիստոս» (Տր. Ած. Յս. Քս.): Հիմա տեսնենք, թէ ի՞նչպէս էր արքայական դրուցը ու անոր ձևերն ու նշանները:

Ա. «Արտաշեսեան» ու «Արշակունեաց» թագաւորութեանց արքայական դրուցը միշտ ծիրանագուլն էր:

Արքայական դրուցին նշանը արծիւ մը կըլլար, որ ընդհանրապէս սակեզույն հյուսվածք ուներ, ախինքն կարծիք դրուցին վրայ սակեզույն արծիւ մը կհյուսվէր հիանալիորեն: Երբեմն մեկ արծիւին տեղ քանդակված կըլլային երկու արծիւներ, որոնց կենտրոնը կերեւար արեւը:

Այս արքայական նշանները որոշակի կնշմարվեն Տրդրան Մեծին թագին վրայ: Կարծիքը արքայական ամենապաշտոնական ու սիրված գույնն էր, ու առ իսկ պատմաստով մեր թագաւորները ծիրանիներ կհագնէին: Կասրես Դիան կիսուի Մեծն Տրդրանի ծիրանի պատմուճաններուն մասին, իսկ Ազաթանդեղոս կպատմէ Տրդրան Մեծին, «Միրանեօք» պատմուճեալ լլլալը: Դրուցն ու գրեթէ անհատապէս Արտաշեսեանի ու Արշակունի հայ թագաւորները կկրէին կարծիք կու-

շիկներ: Այս հարատւութեանց օրով հայկական դրուցները երբեմն նեղ ու երկար ձև ունեին:

Հայր Վարդան Հացունին այս ձևը կեզրաւորեցնէ Դուկիոս Վերոսի դրամներուն վրայ երեցած դրուցներու ձևէն, որոնց բունը նիզակ մը կըլլար:

Դրուցակներն զատ հին հայերը սակեզօծ խոշոր արծիւ մալ կտանէին թաղաւորին առջեւն, ինչպէս կախանդէ Մովսէս Խորենացին, երբ կբացատրէ Վաղարշակ թագաւորը: Այս կարգի արծիւները տեղերու վերայ անցած կըլլային: Պարսիկները ու հռոմայեցիները ևս ունեին այս սովորութեամբ: Հռոմայեցիները առանց պատկերի դրուցներ ունեին ու արծիւք առանձին կտանէին տեղի վրայ անցված: Մինչ հայերը արծիւք թէ կարծիք դրուցին վրայ կքանդակէին ու թէ արծիւանշան խորհրդանշանը տեղի վրայ անցված իբր կրկնակի արքայական դարը Հայաստանի թագաւորին առջեւն կտանէին:

Բ. Հին Հայաստանի Արտաշունի ու Արշակունի թագաւորներուն գործածած սակեզու արծիւք շարունակվեցաւ նախ Բագրատունյաց հարստութեան օրով 885—1045, որուն դրուցն ալ ծիրանագուլն էր:

Բագրատունյաց արծիւները, սակայն, միշտ մեկ-մեկ կերեւէին թևերը լայնորեն բացած վիճակով: Այս նշանները կերեւին Անիին եկեղեցիներուն ճակատին վրայ ու ի մասնավորի Մմբատ թագաւորին կառուցած կաթողիկէին ճակատը (980-ին կառուցած) ու Ազլըլարիոյ իշխանին կառուցանել արված Սուրբ Փրկիչ հոյակապ եկեղեցիին դարձեթին վրայ (1035-ին կառուցած):

Բագրատունյաց դրուցակներուն բունները փոխան նիզակի սակի գունդի մը վրայ հաստատված կըլլային ու անոնց դրուցները հորիզոնական ձևէն ասիլի գեղի վար կախված ձև ունեին:

Կիլիկիոյ Ռուբինեան հարստութեան շրջանին հայ թագաւորութեան դրուցները ևս համակ ծիրանի էին: Ռուբինեան հայ թագաւորները նույնիսկ ծիրանի թանաքով իրենց անունը կառուցեցին (Տես «Միստուան», 388 ու 402):

Ռուբինեան դրուցներուն նշանը թագաւորութեանն առաջ (1086—1198) խաչ մըն էր կամ բերդի մը պատկերը, իսկ Կիլիկիոյ թագաւորութեան շրջանին (1198—1375) հայկական դրուցին նշանը կղայ առշուձք, փոխանակ Հայաստանի Արտաշեսեան, Արշակունյաց ու Բագրատունյաց օրով դրու-

ծածկած արծիվին :

Ռուսինյան թագավորութեան առյուծը թագապսակ էր ու կրոններ նաև խաչադրուի մական մը :

Գ. Հին Հայաստան ուներ նաև եկեղեցական մասնավոր դրոշները : Գրեգոր Գ. Պապին ժամանակին Արևմուտքի մեջ ևս դոյութուն ունեին եկեղեցական դրոշներու դրութիւնը :

Վահան Մամիկոնյանին բանակին մեջ կհիշատակվէին հայ կրոնավորներուն դրոծածած մասնավոր խաչադրոշները :

Կաթողիկոսական դրոշը կարմիր էր արքայականին նման, որուն նշանն էր խաչը : Այս պարագան (խաչը) կրնանք փաստել Վարդան պատմիչին դրվածքներին : Երբ թ. դարուն Յիսէ ոստիկանը Հայաստան ժամանեց, հայոց Չաքարիա կաթողիկոսը ընդառաջ դնաց անոր ու Արաբ Ոստիկանը անոր արտոնեց «դրոշ բառնալ ի խաչի վերայ նորա մտանել առաջի նորա միշտ» :

Կիլիկիոյ թագավորութեան շրջանին կաթողիկոսն վերջ նախապատմութիւնը կվայելեր Սյունյաց արքեպիսկոպոսը : Ստեփաննոս Օրբելյան կարտմե, որ Ե. դարուն Աղուանից Եսփաշեն թագավորը Սյունյաց առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսին նվիրեց իր թագավորական դրոշը, որ համակ կարմիր էր ու դունդի վերա անցված էր :

Ասկե կհասկցվի, որ Սյունյաց արքեպիսկոպոսները կաթողիկոսներու նման կրնային կարմիր դրոշները դրծածել, բայց խաչը փոխանակ դրոշին վրա քանդակելու քունի ոսկեզնդի վրա կրնային քանդակել : Սյունյաց արքեպիսկոպոսները կաթողիկոսներու նման ոսկեթել գահի վերա կրադ մեին ու կրնային հարապետական փիղոն ալ դրծածել : Իրենց դրված տիտղոսն էր «Աստուածապատիւ հոգևոր Տէր» :

Պատմութիւնը կամանդե, որ երբ Անանիա կաթողիկոսը նվաճեց Սյունյաց ապրատամբ Աթոքը, իրմե վերջ իբր կաթողիկոս գահակալող Սարգիս հայրապետը

Սյունյաց գահին վերա եպիսկոպոս կձեռնադրե Հովհաննես անուն վանականը, որուն վերստին կշնորհե «ոսկետուն վան» կըսե Ստեփաննոս Օրբելյան (տես 222) :

Կաթողիկոսին ու Սյունյաց արքեպիսկոպոսին դրոշներն զատ կային նաև եկեղեցական զանազան դրոշներ, որոնք ընդհանրապես բազմազուն էին ու ասեղնադրծված կամ ծածկված էին զանազան ազնիվ քարերով ու սրբազան պատերներով : Եկեղեցական դրոշներն ընդհանրապես կոքրածածկէին հուղարկավորութեանց պահուն, իսկ կաթողիկոսին ծիրանազուն մեծ դրոշը գունդին վրա ահադին ոսկի խաչով մը կտարվեր վեհափառ Հայրապետին ուղեվին, որ հայոց թագավորն ոչ թէ ստորադաս էր, ալ, ընդհակառակը, ասելի հարգանք կվայելեր ոչ միայն հայոց արքունիքին մեջ, այլ նախ օտար վեհապետներն :

Երբ դրոշները կտարվէին մասնավոր դրոշակալիներուն կողմէ :

Թագավորական ու կաթողիկոսական գրոշներուն դրոշակալիքը միշտ բարձրաստիճանի լիշան մը կըլլար : Իսկ լիշանական դրոշները կտարվէին պարզ զինվորականներու կողմէ :

Հայկական հին դրոշներուն մեկ ամփոփ պատմութիւնը գրեթե վերջ կրնամ հարատրեն ըսել, որ հին Հայաստան տմեն մարդերուն մեջ առաջացած էր ու նախանձելի երկիր մըն էր ու հայրական թագավորութիւնը պատվարեր և օրինակելի էր ամենուրեք :

Հին Հայաստան իր մեծ անցյալով կրնա հավետ պարծննալ իբր փառահեղ ու իբր անդուգական աշխարհ մը, որ իր փառքի շրջաններուն քաղաքակրթութեամբ շատ չէր տարբեր հելլենական ու հռոմեական երկրներն, իսկ բարոյականով գերիվ էր ամբողջովին :

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Նիկոպիա
(Կիպրոս կղզի)

